

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԷՐ ՀԵՆՐԻ ԲԵՋՆԻԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

05.05.2015 19:53



Հայաստանի փաստաբանների պալատում, այսօր՝ մայիսի 5-ին, հյուրընկալվել էին Մոսկվայի փաստաբանների պալատի պատվիրակությունը՝ պալատի առաջին փոխնախագահ Հենրի Բեգնիկի գլխավորությամբ, ում ուղեկցում էին Մոսկվայի փաստաբանների պալատի փաստաբան, որակավորման հանձնաժողովի անդամ Նիկոլայ Կիպիսը և Մոսկվայի փաստաբանների պալատի փաստաբան Յուրի Չանչուրյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունել է ուղևորներին Հայաստանում և Փաստաբանների պալատում, և ներկայացրել Պալատում կատարվող աշխատանքները: Հենրի Բեգնիկը բարձր է գնահատել հայ փաստաբանների միասնականությունը և հայտնել, որ Ռուսաստան այդ հարցը կազմակերպելը բավականին բարդ է, քանի որ միայն Մոսկվա քաղաքում գործում է 9000 փաստաբան: Գործընկերների ուղեկցությամբ Հենրի Բեգնիկի գլխավորած պատվիրակությունը շրջայց է կատարել Պալատում՝ ծանոթացել ՀՀ փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի հնարավորություններին:

Հայ փաստաբանների հետ ընդլայնված կազմով հանդիպում-քննարկման ժամանակ արժարժվել են փաստաբանական գործունեությանն առնչվող հարցեր, այդ թվում՝ փաստաբանական գաղտնիքի և հանրային պաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները:

Խոսելով հայկական և ռուսական փաստաբանական ինստիտուտների մասին՝ Բեգնիկը նշել է, -**Մեզ միավորում են մեր վստահորդները: Յուրաքանչյուր փաստաբանի հաջողության գրավականը ունենալ գիտելիք, փորձ, ինչո՞ւ է, նաև՝ հաջողություն**, - հայտնել է փորձառու փաստաբանը:

Հենրի Բեգնիկը խոսել է փաստաբանների և հաճախորդի միջև կնքնվող պայմանագրի առանձնահատկությունների, ինչպես նաև փաստաբանների իրավունքների մասին: Անդրադարձ է եղել փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանին տույժի ենթարկելու ինստիտուտին: Խոսելով ռուսական փորձի մասին՝ Բեգնիկը նշել է, -**Փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հետ կապված խորհրդի որոշումը դատական կարգով կարող է բողոքարկել միայն փաստաբանը, միայն նա ունի այդ որոշմամբ նյութաիրավական հետաքրքրություն, քանի որ**

այդ որոշումը միայն իրեն է ուղղված և պատասխանատվության միջոցներն էլ միայն իրեն են ուղղված: Եթե քաղաքացին գտնում է, որ փաստաբանի գործողություններից վնաս է կրել, նա կարող է փաստաբանի դեմ վնասի փոխհատուցման պահանջով դիմել դատարան, բայց ոչ դատական կարգով վիճարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության չենթարկելու՝

Խորհրդի որոշումը: Սա վերաբերվում է նաև այն դեպքերին, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դիմումով դիմել են պետական մարմինները՝, - նշել է Մոսկվայի փաստաբանների պալատի փոխնախագահը:

Հյուրերը հետաքրքրվել են, երբ մեղադրյալի բարեկամները փաստաբանի հետ պայմանագիր են կնքում: Ինչի պիսի՞ ուժ ունի այն: Արա Զոհրաբյանը պարզաբանել է հետևյալը,-**Սյն ժամանակ, երբ մեղադրյալի հարազատները փաստաբանի հետ պայմանագիր են կնքում, հիմք է տալիս, որ փաստաբանը կարողանա տեսակցել իր պաշտպանյալին: Առաջին հանդիպումից սկսած մեղադրյալի հարազատների (պատվիրատու), փաստաբանի և մեղադրյալի հարաբերությունները որոշակի առանձնահատկություններով են կարգավորվում: Մենք մեր վարքագծի կանոնագրքով արգելում ենք փաստաբանին տեղեկատվություն տրամադրել վստահորդ չհանդիսացող պատվիրատուին, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Դեպքեր են եղել, երբ պատվիրատուն մեղադրյալի համար հատուկ փաստաբան է վարձել այն նպատակով, որպեսզի այդ մեղադրյալին պահի իր հսկողության տակ: Մենք այդ ժամանակ փաստաբանին հորդորում ենք, որպեսզի նա ղեկավարվի մեղադրյալի շահերով՝**

Բեգնիկը որպես քննարկման հիմնահարց առաջարկել է փաստաբանական գործունեությունը որպես առևտրային կամ ոչ առևտրային գործունեություն դիտարկելու հարցը և նշել, որ Ռուսաստանում այն դիտարկվում է որպես ոչ ձեռնարկատիրական գործունեություն: Ռուս փաստաբանների պատվիրակությունը մեծ ուշադրություն է դարձրել Հայաստանում հանրային պաշտպանի ինստիտուտի զարգացվածության մակարդակին: Հենրի Բեգնիկը հայտնել է, որ Ռուսաստանը այս առումով բավականին տեղեկատվություն ունի ստանալու: Ավարտին՝ կողմերը պայմանավորվել են հետագայում էլ առիթներ ստեղծել փորձի փոխանակման համար: ՀՀ փաստաբանների պալատին Հենրի Բեգնիկը

նվիրել է իր հեղինակած գրքերը և հույս հայտնել, որ դրանք պետքական կլինեն հայ փաստաբաններին: Պալատի նախագահ Արա Զոհրաբյանը Պալատի անունից Մոսկվայի փաստաբանների պալատին նվիրել է խորհրդանշական ժամացույց:







Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })